ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՁԵՌՆԱԴՐՎԵՑԻՆ ՀԻՆԳ ՆՈՐ ՔԱՀԱՆԱՆԵՐ

Փետրվարի 27-ին՝ Սրբոց Վարդանանց տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, ձեռամբ Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանի, քահանայական ձեռնադրություն և օծում ստացան Մայր Աթոռի հինգ սարկավագներ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց Ս. Պատարագ, որի ընթացքում ձեռնադրող Սրբազան Հայրը մեկ առ մեկ օծեց ընծայացուների ճակատները, աջ և ձախ ձեռքերի ափերը՝ նոր անուններով կոչելով նրանց. Արտավազդ սրկ. Ջաքարյանը վերակոչվեց Տ. Խորեն քահանա, Խաչիկ սրկ. Ավետիսյանը՝ Տ. Եղիշե քահանա, Արմեն սրկ. Առաքելյանը՝ Տ. Կորյուն քահանա, Մեր սրկ. Ծատուրյանը՝ Տ. Տաճատ քահանա, Արիստակես սրկ. Նավասարդյանը՝ Տ. Վարդան քահանա:

Ձեռնադրությունից հետո Ավագ Ս. Խորան բարձրացան Վեհափառ Հայրապետը, Սրբազան Հայրերն ու միաբանները և, համբուրելով քահանաների Սրբալույս Մյուռոնով օծված ճակատներն ու ձեռքերը, շնորհավորեցին նրանց:

Ս. Պատարագի ավարտին Մայր Աթոռում տեղի ունեցավ Սրբոց Վարդանանց նվիրված հանդիսություն, որի ժամանակ Ս. Էջմիածնի միաբանությունը, պաշտոնեությունը, Գևորգյան Հոգևոր ճեմարանի սաները և ներկա բարեպաշտ հայորդիները շնորհավորեցին Նորին Սրբությանը անվանակոչության օրվա առիթով:

Նույն օրը, երեկոյան ժամերգության ընթացքում, կատարվեց նորաօծ հինգ քահանաների վեղարի փվչության և աբեղայի օրհնության կարգը:

Վարդանանց տոնին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցում նշվում է Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անվանակոչության օրը: Այս առիթով հընթացս Ս. Պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՐԱԺԱՐՈՒՄՆ ԱՇԽԱՐՀԻՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ
ՅՈՒՍԻՍԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱՎԱՆ ԵՎ ՈՒՍ

ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՎ ՄԱՅՐ ԻՍՐԱՅԵԼԻ ԳԱՐԵՂԻՆ ԵՊՍԿՈՊՈՍԸ ՊԱՏԱՐԱԳՈՒՄ ԸՆԹԵՐՑՎԵՑԻՆ ԻՐԵՆՔ ՀԱՅՐԱՊԵՏԸ